

(Նամակ Խմբագրութեան)

(Կը շարունակվի)

Ներքերում: Այդ առաջարկութիւնն ընդունվեց: Յետոյ ժողովը զբաղվեց ընտրութիւններով: Եւրոպական լիգայի ղեկավարութեան անդամ Ջ. Տէր-Գրիգորեանին՝ նրա պաշտօնավարութեան պատճառով՝ ժողովը միաձայն վերադարձնեց նրան, բայց նա ճիշդի բացման օրից, շարունակ 9 տարի, վարչութեան անդամի, մեծ ժառանգ Նախագահի պաշտօնը վարած լինելով՝ չնորակալութիւն յայտնեց ժողովի վստահութեան համար և դրականապէս հրաժարվեց: Այնուհետեւ բայց քուէարկութեամբ և միաձայն վարչութեան անդամներ ընտրվեցին՝ հարկային տեսուչ Լ. Ղուկասեան և Վ. Կարապետեան, իսկ փոխտեսուչ—Յ. Յարութիւնեան: Պ. Ղուկասեանի ընտրութիւնը ընդունվեց ծախսարկութեամբ: Վերադարձնող յանձնաժողովի անդամներ ընտրվեցին Գ. Սուխաֆեան, Գ. Պապոյեան և Ն. Կոբակեան: Ընդհանուր ժողովները նախագահ վերադարձնեց Ա. Կրիգորեան, իսկ քարտուղար—Ա. Խաչատրեան: Թէև ընտրութեան ժամանակ մի քանի անկախ ուժեր լինեցին, որոնք տեղի ունեցան, բայց ընտրութիւնները, ընդհանրապէս, աջող կարելի է համարել:

Մի նկատողութիւն: Ապրիլի 13-ին կայացած ընդհանուր ժողովում մի յանձնաժողով ընտրվեց, որը պիտի մանրամասն ծանօթանար վարչութեան մասնաւոր դպրոց-արհեստանոցի հաշիւները և թէ ընդհանրապէս նրա կազմակերպութեան հետ և զեկուցանէր մի արտակարգ ընդհանուր ժողովին, որը յատկապէս այդ նպատակով պիտի գումարվէր մօտ մի ամիս յետոյ (տես «Մշակ» № 65): Այդ յանձնաժողովը իր ժամանակին մի քանի նիստում քննեց դպրոց-արհեստանոցի հաշիւները, բայց՝ չը նայած որ 7 ամիս է անցել արդէն՝ ոչ յանձնաժողովը ներկայացրեց իր զեկուցագիրը, ոչ էլ արտակարգ ընդհանուր ժողովը գումարվեց, ինչպէս վճռված էր: Բնական կը լինէր, որ այս ժողովում գտնէ խօսվէր այդ հարցի առիթով, բայց յանձնաժողովի անդամները բացակայ էին, և ուրիշ ոչ ոք ձայն չը հանեց այդ մասին: Նախորդ ընդհանուր ժողովի արձանագրութիւնն էլ չը կարդացվեց, ինչպէս ընդունված է. գուցէ այն ժամանակ ժողովը յիշեր իր վիճակը և հետաքրքրվէր, թէ ինչպէս են իրադրութեամբ այդ վիճակները... Սա արդէն ամենողի ձեւակերպութիւնն է, այլ ուղղակի թուրքութիւն, եթէ աւելին չտեսնէ: Շատ ցաւալի է, որ մեզանում տիրապետում է ժողովներին ուղ գալու, չուտ գնալու, նոյն իսկ լուրջ պարագայները գլխից ուղ ա՛նելու սիրտները...

Ի զեպ. բարեգործական ընկերութեան խորհուրդը մեր ճիշդի մասնաւոր դպրոց-արհեստանոցի ծրագրի հաստատել տալը և պաշտօնական բացումը յետաձգել է առ այժմ. այդ պատճառով մեր քաղաքում խօսվում է մասնաւոր ընկերակցութեամբ այդ դպրոց-արհեստանոցը գնելու և վարչութեան նախագահ Նախատակին ծառայեցնելու մասին, մասնաւոր որ վարչութիւնը կարող է նորը բանալ, եթէ միայն խորհուրդը պաշտօնական ընթացք տալու լինի գործին: Յանկանում ենք կատարեալ աջողութիւն:

Ջ. Տ.—Գ.

ՆԵՐՎԻՆ ԼՈՒՐԵՐ

Կովկասեան կառավարչապետ իշխան Գրիգորի վերադարձը Բագուից՝ սպասվում է վաղը, շաբաթ, նոյեմբերի 14-ին:

Մեզ հեռագրում են Ներսիսի նոյեմբերի 11-ից. «Այսօր, Ներսիսի դուռն 41 ձայնով ընդդէմ 9-ի՝ քաղաքապետի ընտրեց Իսահակ Մելիք-Աղամալեանին»:

Հաճութեամբ կարդայինք «Торгов. Пром. Газ.» լրագրի մէջ հետեւեալը. «Բժիշկ Առատամով (Առատամովի բժշկական մասն տեսուչ) գտել է մի թունաւոր միկրօբ, որ նա համարում է ձկանի թոյնի պատճառը: Այդ գիտն ստուգելու և դժուար Առատամովի ապացոյցները լսելու համար, երկրագործութեան և պետական կայսաւանների միջնորդութեան մէջ կազմվել է մի առանձին մասնաժողով, բաղկացած գանապան հաստատութիւնների ներկայացուցիչներից: Ներքին գործերի միջնորդութեան կողմից ներկայացուցիչ է նշանակված բաղկերիօգիայի մասնագէտ զինուորական-բժշկական ակադեմիայի պրիվատ-դոցենտ Փէյսլէր, փորձական բժշկական-կալանութեան կայսերական ինստիտուտի կողմից՝ պրոֆէսոր Նենցիլի, զինուորական-բժշկական ակադեմիայի կողմից՝ պրոֆէսորներ Ս. Բոսկին և Չիստովիչ, իսկ երկրագործութեան միջնորդութեան կողմից՝ դոկտոր Ֆէօդոսեմով: Կրօնքէսոր Վինգրադսկի, որին յանձնված է և մասնաժողովի նախագահութիւնը: Բացի դրա-

նից, մասնաժողովի մէջ կը մտնի և պրոֆէսոր Աֆանասիէվ, որի լաբորատորիայում Առատամով կատարել է իր հետազոտութիւնները:

Նոյեմբերի 12-ին, առաւօտեան, Թիֆլիսի Առատ-Արալեան հրապարակում մօտ 25 տարեկան սպանված մի երիտասարդ գտան: Չարագործները այդ երիտասարդին սպանելով ուրիշ տեղ՝ քաակի մէջ էին գցել և բերել վայր գցել այդ հրապարակում: Վէրքեր երևում էին դժբաղդի կոբորդի և փորի վրա:

ՊԵՏԵՐԲՈՐԴԻՅՑ մի մասնաւոր նամակով հետեւեալ տեղեկութիւնն են հաղորդում. «Կերաստանէի օր. Սննա Խիթարեան այժմ Պետերբուրգում կատարելագործվում է դրամատիկական արուեստի մէջ: Նա ցանկութիւն ունի մի քանի տարի սովորել դրամատիկական կուրսերում. բայց նախ քան այդ, օրիորդը զիմեց մի քանի աշիւ ընկնող բեմական դրամներ, որոնք ձերբգրեցին օրիորդի մէջ, այլ և առանձին կարիք չը տեսնելով օրիորդի համար դրամատիկական կուրսերը մտնելը, խորհուրդ տուցին բեմական բեւերարտար կազմել: Յայտնի դերասանուհի Ստրեպտովա ուշադրութիւն է դարձրել օրիորդի վրա և սիրով պարագում է նրա հետ բեւերարտարի ուսումնասիրութեամբ: Օր. Խիթարեան, մտադիր է մայիսին վերադառնալ Թիֆլիս, իրան հայոց բեմին նուիրելու համար»:

ՂՈՒՐԱՅԻՑ մեզ գրում են. «Վերջերս մայստեղ մեծ պահանջ է զգացվում սայլերի և առհասարակ մշակների: Մի կողմից երկաթուղու կառուցումը և միւս կողմից այս տարվայ չը տեսնված առատ բերքը, խեցիկի սալապահանջները և բանտները մեծ թիւ և լծակալները բարձրացրին նրանց գինը: Բերքի կէս մասը դեռ չէ արտահանված. շատերը տանձ-խնձորը թաղում են գետնի տակ, զարնանը հանելու համար: Ուրիշ եղ չը կայ. սալ չը կայ, որ արտահանեն: Պողոկէսը այստեղ շատ է ման է. մի արկղը արժէ 1 ր.—1 ր. 20 կ., իսկ քրէնը մինչև Գէրքերը՝ մի արկղի համար պահանջում են 2 ր.—2 ր. 20 կ.: Ներկախուղու կառուցումը յետաձգվում է միակ այն պատճառով, որ սալ չը կայ.—չինչու Նիւթերը գծուարութեամբ և ուղ է ձեռք բերվում»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Կ Ր Ե Տ Է

Կանաչ քաղաքի մայր եկեղեցում նոյեմբերի 8-ին կատարվեց հանդիսաւոր գոհացողական մաղթանք Կրետի աղատութեան առիթով: Մայր եկեղեցին, քաղաքային շինութիւնները և նաւահանգիստը նախընտրեց զարգացված էին չորս պետութիւնների Կրետի ինքնավարական դրօշակներով: «Standard» լրագրի թղթակիցը վկայում է, որ ընդհանուր ուրախութիւնը մնայլից այն պատճառով, որ զինուորականների վրա դեռ ծածանում էր թիւրքաց դրօշակը: Մովսէսեանների յայտնած մի քանի ակնարկների շնորհիւ կրեմլները հաստատ համոզված էին, որ թիւրքաց դրօշակը բոլորովին կը հեռացվի: Գործադիր կոմիտեի նախագահ Սֆակիճեանկ այս առիթով դիմեց ծովագետ Սկրիվոլին, բայց սա պատասխանեց, որ դրօշակի վերաբերմամբ ինքը ոչ մի հրահանգ չէ ստացել ուսաց կառավարութիւնից և որ ծովագետների կողմից առաջարկված երկրորդ ուղղութեամբ մէջ միայն սպառնալիք էր գրված, թէ եթէ թիւրքաց դրօշակը չը հեռանա, այն ժամանակ թիւրք դրօշակը կը հեռացվի: Պէտք է, սակայն, իմանալ, որ ռուսաց ծովագետի պատասխանը վերաբերում էր միայն Կանաչային, որովհետեւ Բէտիմի քաղաքում, որ ռուսաց պաշտպանութեան տակ է գտնվում, թիւրքաց դրօշակ չը կայ: «Standard»-ի թղթակիցը պատմում է և մի միջադէպ, որ տեղի ունեցաւ թիւրքաց դրօշակի հրամանատար Եաբրի-փաշայի հեռանալու ժամանակ: Փաշան նստեց այն չղզեանի մէջ, որ պիտի տանէր նրան Կ. Պոլիս, բայց հրաման չէր տալիս, որ նաւը հեռանայ, սակայն թէ Բ. Կոնից ինքը պիտի դրական հրաման տանայ: Կրետից հեռանալու մասին Տեմիշով փաշայի յամառութիւնը, Փրանսիական ծովագետ Պետիէ հրաման տուեց, «Vautour» անունով տորպեդային մակույկին ստիպողական միջոցներ ձեռք առնել, և միայն այդ ճնշումից հարկաւորված՝ Եաբրի-փաշայի չղզեանից հեռացաւ: Կանաչայից: Բայց վատ եղանակի պատճառով չղզեանն ստիպված էր վերադառնալ Սուրա ծովածոցը. սակայն այնտեղ Եաբրի-փաշային թող չը տունի ափ խնդել և նրա չղզեանը եւրօպական մի քարտանաւի հեղուկութեան ենթարկվեց:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻՒՆՆԵՐՑ

Կ. Պոլիս, նոյեմբերի 1-ին
Պարոն Բ. Բօզէնի պիւնտարեալ ֆրանսացին՝ որ Վանայ, Բաղէշի, Մշոյ գաւառներն ալ պտտած է 1895-ին—բրօշիւր մը հրատարակած էր «La verité sur l'Arménie» անունով, որուն մէջ ըսած էր՝ թէ Ասիոյ մէջ գոյնող թուրքերը՝ բրիտանեաններն ոչ նուազ կը նեղուին օսմանեան կառավարութեան վարչութեան երեսին:

Նոյն հեղինակը «Les réformes» վերնագրով խիստ շահեկան և լուրջ յօդուած մը հրատարակելով եզրկատակաւ «Courrier d'Orient» ֆրանսերէն թերթին մէջ, Թիւրքիայի տնտեսական դրութեան մասին, կըսէ՝ «Ներս տարիէ հետէ, մարդիկ կորելի ալիւրով կը սնանին» եթէ այն ալ ձեռքերնին անցնի, և, կը նշեն յարգեալ խնամ անկողիններու վրա... Իրաց այս վիճակը լաւ համար մը մէջ դնելով բարեւոյտը համար՝ հարկ է երկրագործութիւնը բարեկարգել, բան մը, որ շատ անգամներ խոստացուած էր այս աշխատանքի ժողովուրդեան: Սոյն կենսական խնդիրն են՝ բուն իսկ տեղւոյն վրա ուսումնասիրելը, 1889-էն մինչև 1891, ամբողջ երեք տարի, Բաղէշի կուսակալին ընկերացած միջոցին *), նոյն վիճակէն մէջ, որ ամենէն կարեւորագոյն գաւառներէն մին է: Շատ անգամներ կըսէի կուսակալին՝ որ եթէ երկրագործութիւնը բարեկարգ վիճակի իսկ տեղւոյն վրա ուսումնասիրել կըստուի կըստուի պարագայի այդ բանով իրաց հանգամանքը բոլորովին կերպարանափոխ կը լինի և ամբողջ երկրին հարստութիւնը կապահովուի: Սրբաբն, երկրագործութեան բարեբաւը բոլոր երկրական պետութեանց խարխիւն է: Թիւրքիայի մէջ կեղերի թէ, մարդ միտքէ չանցունելով թէ արդիւնաբերութեան այդ ճիւղն ինչ մեծ արժեք ունի, և, տէրութիւնն ալ, արևմտեան երկիրներու մէջ եղածին պէս, այնքան մեծամեծ գումարներ չի վատնէր՝ առատօրէն ձեռք բերելու համար այն արդիւնքը՝ զոր բնութիւնը կը պարզէ այս ըսեալներին հոգին:

Ամեն բանէ առաջ հարկ է հողային կալուածներու վրա նոր քննութիւն մ'ընել: Հողային կալուածներու վրա ժամանակին դրուած ծանր գինները, արդարեւ, այսօր երկրին բնակիչներուն վրա իրենց կարողութիւնն վեր բեռ մը եղած է: Եւ որպէս զի այս առաջին գործը յաջողութեամբ գլուխ ելնէ, ամեն ազգերէ ընտրուած ձեռնաս մարդիկներէ յանձնաժողովներ կազմելու է՝ որ պետական շահերը ժողովրդական շահերուն հետ համարաշէն բռնելով՝ ոչ թէ կալուածատիրոջ ունեւորութիւնն՝ ալ կալուածին բուն արժէքն ի նկատ առնուն և ըստ այնմ գնահատեն: Այս նոր գնահատման միջոցին՝ յանձնաժողովները պէտք է որ բոլորովին հեռու կենան հողային կալուածներու վրա արդէն դրուած պաշտօնական գիններէն՝ որ շատ չափազանց են, նոյնպէս պէտք չէ՝ որ ի նկատ առնուն այդ հողերու վաճառման գիններն, որ իրենց իսկական արժէքն շատ ստորին են, հետեւեալ, ինչպէս կը մակաբերուի, վերէն վար կատարեալ փոփոխութիւն մ'ընել հարկ է, որ այդ տուրքերն օրինաւոր վիճակի մէջ մտնեն: Թէ հողային կալուածէն և թէ անոր յառաջ բերած արդիւնքն միանգամայն տուրք պահանջել երկրի մը բնակիչները կատարեալպէս չափաւոր կը նշանակէ: Քրիստոնեայ և իսլամ երեսներէ ու կառավարական պաշտօնականներէ կազմուած խոսն յանձնաժողով մը պէտք է որ այդ տուրքերու գործն ալ վերաքննէ:

«Հողային կալուածները վերաքննել և ըստ այնմ նոր տուրքեր սահմանել՝ երեք շնա չի բերելու պետական գանձուն: Սրբէն հիմաւորան տուրքերը մեծ մասամբ թղթի վրայ կը մնան և բնաւ, կրնան ըսել թէ, չեն կարող գանձուիլ: Նոր տուրք տարեկան գանձման ժամանակը լրանայ, այնքան յետեւալ տուրքեր կը մնան, որ այլ ևս չեն գանձուիլ: Նոր գիւղերու աղանդութիւնը ձեռք բերուի՝ կառավարութիւնը նորէն կրնայ չանել՝ ինչ որ կորուսած էր տուրք նոր բաշխման ժամանակ: Հողագործութիւնը տարածուելով մեծածախ վաճառականութիւնը վերստին կը կենդանանայ, և քաղաքային թէ գիւղացի հանգիստ անողոր կենանք մ'ուսնեանքով իրենց վրայ գրուած բարձր տուրքերն ալ՝ այնքան ծանր չեն թուի իրենց: Եւ՝ տուրքերու արձանագրութեանց տեսարկները տեսնելով կ'ըսեն, որ այդ յետեւալ տուրքերու գումարն՝ այսօր մէկ քանի հարիւր հազար գանձաններու կը հասնի (ոչ թէ գանձաններու, այլ եթէ հաւաքաբար հաշուենք, թիւրքն հարիւր հազար լիւրաներու ալ): Ժողովուրդն

*) Պ. Բօզէն՝ այն ատեն, Բաղէշի կուսակալ Բէնգի վաշային՝ այժմ Կրետի կուսակալ, գաւառներուն ֆրանսերէն լեզուի ուսուցիչն էր:

իր պտուղը տէրութեան վճարելու համար ներկայանալ անկարելիութեան մատնուած է: Յետոյ տուրքերը բռնութեամբ չէ կարելի գանձել, որովհետեւ կառավարութեան կողմէն եղած պարբերական պահանջումներն, ինչպէս անցելոյն մէջ, նոյնպէս և հիմա՝ այնքան ստակալ բռնութիւններ յարուցին, որ այդ պատճառով երկիրը մինչև հիմա չի կրցաւ ինքզինքը գտնել:

«Կալուածութիւնը գիւղացիներուն գլխուն մեծ փորձանքն է: Նրկու կերպ վաշխառութիւն կայ: Առաջինն այն է որ՝ մէկը գիւղացիի մը ստակ փոխ կուտայ շատ բարձր տոկոսով, իսկ երկրորդն այն է, որ մէկը գիւղացիէ մը բան մը կը գնէ և յանձնումը երեք չորս ամիս յետոյ կը կատարուի՝ կանխաւ վճարուած գումարի մը փոխանակութեամբ, որ ծախումային կէս գինը չի բռնել: Հողագործն ստակէ նեղուելով՝ կը ծախէ քաղած արդիւնքն ու եղները ողորմելի պայմաններով՝ երբ տուրք ժամանակը կուգայ: Այս ամենը գիւղացին մոխրի վրայ կը նստեցնէ: Նս աշըղով տեսայ գիւղերու մէջ աղարակաւեքեր, որոնց հողերն անաւոթ վաշխառութեան ձեռք անցնել են, տեսայ նոյնպէս քաղաքներու մէջ վաճառականներ, որ կործանուած են մարդկային արիւնը ծծող այս տեսակ ուրուականներու երեսին: Հաբրիւրն 30-է սկսեալ մինչև հարիւրն 50 տոկոս կ'առնուի գիւղացիներէն:

(Պ. Բօզէն այդչափ միայն գիտէ, իսկ մենք գիտենք, որ այդ յարակէզ վաշխառութեան, որոց մէջ հայեր ալ կը գտնուին դժբախտաբար, հաբրիւրն հարիւր տոկոս կը ստանան գիւղացիներէն: Մենք այս կէտը պիտի բացատրենք մասնաւոր յօդուածով մը՝ ուրիշ առթիւ):

«Կառավարութիւնը թէպէտ երկրագործներու փոխ ստակ տալու համար առանձին դրամարկը հաստատեց գաւառներու մէջ՝ սակայն այդ դրամարկները տարւոյն երեք չորրորդ մասը պարագայ են: Ի՞նչ կարելի է ընել այս ողորմելի հանգամանքներուն ներքեւ:

«Գալով քաղաքային բարենորոգումներուն, աւարտ ուսումնասիրութիւնն ինձմէ աւելի ձեռնահասներու կը թողում, եւ միայն սն խորհուրդը կուտամ կառավարութեան բարեկարգութեան՝ որ միշտ աչքի առչէ ունենան սն ձեւարարութիւնը՝ թէ պաշտօնեայ մը՝ որ կանոնաւոր կերպով չը ստանար իր ամսաթիւնակը՝ նա միշտ թող պաշտօնեայ մ'է (և զերծմանց նշաւակ):

«Պիտի առարկուի թերեւ թէ պաշտօնեաներուն ամսաթիւնակը կանոնաւորապէս վճարելու համար դրամ պէտք է: Այս, այդ պ. Պալիսի ձեւարարութիւնն է, բայց օսմանեան պետութիւնը, միւս պետութեանց պէս՝ կրնայ, իր պաշտօնեաներուն ամսաթիւնակները վճարելու համար պէտք եղած դրամն ունենալ, եթէ ամեն տեղ իմաստուն տնտեսութիւն մը ի գործ դնէ և տէրութեան գանձը թիւթեցնէ՝ այն տեսակ ծախքերէ՝ զոր հանդակատարութիւնը կը վճարէ միշտ տգիտութեան, և շատ անգամ՝ ժողովրդին ներքեւ:

Գիրով

ՆԱՄԱԿ ՊԱՐՍՅԱՍՏԱՆԻՑ

Ս ա լ մ ա տ, նոյեմբերի 1-ին

Լինել Պարսկաստանում, սեփական աչքերով տեսնել սարափելի, օտար ակունքի համար անհասարակ կեղտոտութիւնները և չը նկարագրել զրանց, կը նշանակի գտնվել յանցաւոր անտարբերութեան մէջ: Ընդհանրապէս ամբողջ Պարսկաստանում և մասնաւորապէս Ստրպատականում, չը կայ ոչ մի օրինաւոր մաքուր քաղաք: Այն մի գրօսառնելի՝ հասարակաց պարտէզ չը կայ, ուր կարողանային մի փոքր մաքուր օդ ծծել հազարաւոր մարդիկ: Քաղաքներ, մասնաւորապէս գիւղերի փողոցներում անպակաս են կեղտոտութիւնները՝ տնային և բակերի աղը, սառնկած կատուներ և չնեղ, մարդկային քրք և հազար ու մի այն տեսակ բաներ... Բնակիչների շրթերի վրա էլ մաքրութիւն չը կայ քաղաքներում. իսկ գիւղերում, ոչ, նրանք զազալի են. գուցէ նրանք չը յիշեն, թէ երբ են բաղնիս զնայել, կամ երբ է իրանց շորը լուացվել... Շատերի գլխարկները և շրթերը այնքան են կեղտոտվել, որ սե սալի գոյն են ստացել և պատկում են. իսկ մարմնի վրա կեղտը նստած է չերտերով: Նոյնը կարելի է ասել և ջրի ու հացի մասին:

Գիւղերի ջուրը կարելի է մի փոքր մաքուր համարել, որովհետեւ կան գետեր և աղբիւրներ, թէև շատ անգամ այդ ջրերը բոլորովին ապակալուած է մանուշակաւոր, բայց քաղաքներին՝ անտանելի է: Առուակում, որտեղից ջուր է վերցնում տանտեան հազարներով ժողովուրդը, պարսիկ կանայք լուսնում են իրանց երկրաների ապակալված շրթերը, թափում են լուացքի ջուրը, մաքրում են կերակուր եփելու համար բերած միսը, ձիապանները մաքրում են իրանց

ձեռքը, ճանապարհորդը աղյուսակ մաքրում է իր ոտները, և... այնու ամենայնիս, ժողովուրդն աղյուսակից վերցնում է իր խմելու և թեյ պատրաստելու ջուրը, միանգամայն հաւատաքայտ լինելով, որ մաքուր է, չը նայելով, որ մի և նոյն ժամանակ տեսնում է, թէ ինչպէս պարսիկը, մի քանի քայլ հեռու, նոյն առուակի մէջ պղպռած, իր անխուսափելի պարտքն է կատարում... Իսկ երբ այդ ջուրը վերցնողները հարցնէք, թէ ինչպէս է ձեր քաղաքի ջուրը, նա կը պատասխանի, թէ «մեր քաղաքի ջրի նման լաւ ջուր ոչ մի տեղ չը կայ»: Եւ այդ կարծիքը մէջ էլ ինքը ճշմարտապէս հաւատաքայտ է...

Բայց համբերութիւն ունեցէք, ընթերցող, սրանից աւելի վատթարը կայ: Ընդհանրապէս ամեն մի քաղաքում անսարսաղ կայ մի-մի հաւուց, երկարութիւնը մօտ 3 սառնէն, լայնութիւնը 2 սառնէն, իսկ խորութիւնը մօտ 2 արշին: Մասնագէտների կարծիքով, մի տեղում, որտեղ գտնվում է 40 պուզ ջուր, այնտեղ ինչ քանակ կը գտնուի թիւն էլ ուր անվաճ լինի, ջուրը դարձեալ մաքուր է. մանաւանդ եթէ այդ ջուրը հոսող է: Յիշեալ հաւուցները մէջ կաշեգործը բերում իր կաշին է մաքրում, մսագործը բերում իր միսն է մաքրում. պարսիկը լուացվում է այնտեղ, թընում է, խնչում է, երբեմն էլ նամակ է կատարում. մի փոքր յետոյ մի ուրիշ պարսիկ բերում է նարդիլէն և այնտեղ մաքրում, պղնձագործն իր պղնձն է մաքրում. թէյագործն այդ հաւուցի կողքին նստած նոյն ջրից թէյ է պատրաստում և ծախում ժողովրդին. մի փոքր յետոյ, մի ուրիշ պարսիկ սառույցը բերում է, թաթախում է նոյն ջրի մէջ և հանելով գնում՝ միամտովով թէ մաքրվեց... այդտեղ գցում են սառկած կատու, սառկած շուն, թաթախում են մարդկային աղբ, զանազան տեսակ վրէժիւններ... Եւ այդ բոլորից յետոյ հացագործը գալիս է այդ մաքուր ջրից վերցնում տանում հաց պատրաստում, ժողովրդի վրա ծախելու համար...

Չը պէտք է մոռնալ, որ այն ալիւրը, որից հաց են պատրաստում, այդ ջրից մաքուր չէ. հացագործը ցորեն ծախողից առնելով ցորենը, առանց մաքրելու, տանում է ջրաղաց աղալու. ցորենի մէջ լինում են ընդհանրապէս քարի կրտորտներ, և և հացը դառնացնող որոնք, կենդանիների աղբ և այլն. ցորենի այդ դրութեամբ աղալուց յետոյ բերում են փուռը. յիշեալ մաքուր ջրից հացագործն սկսում է խմոր անել և հոնցել. ձեռքերն, ի հարկէ, հինալաւ են. երբեմն խնչում է, ձեռքը ըստ շորերին, և կարծիքով թէ ձեռքը մաքրվեց, շարունակում է խմոր հոնցելը. քիչ յետոյ, յայտնի միջատներն սկսում են կծել այդ խմոր անողի մարմնի զանազան մասերը. խմոր անողն սկսում է միջատները որոնել, և երբ գտնում է, սպանում է և, առանց լուացվելու շարունակում խմոր հոնցելը... Հոնցելուց յետոյ, խմորն իր մէջ ընդունում է նաև մի քանի տեսակ անկողնի հիւրեր, այն է՝ զիբիլ, աւազ, սպիտակ աղիւս, ճանձ, բզեզ, և այլն և այլն, և յետոյ... թիւն են հալը... Օ՛, Տէր իմ Աստուած, ինչպէս ուռել այս տեսակ հացը... Բայց ինչ արած, չօ չէ կարելի քաղցածութիւնից մեռնել. պէտք է ուտել...

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Berliner Local Anzeiger» լրագիրը հաղորդում է, «Հայկական և կրեանական ազդեցության Լոնդոնում ապրող հիւսիսային ամեն կերպ գրգռում են հասարակական կարծիքը Վրէժի կայսրի դէմ: Այս նպատակով նոյն իսկ առանձին կոմիտէ է կազմվել և Գերբալտարի եպիսկոպոսը այդ կոմիտէին մի նամակ գրեց, որի մէջ երկար խօսում է այն փաստի մասին, որ պատճառեց կայսրը թիւրքերով ձեռնարկված մարդկային բոլոր գործերին: Վեստմինստերի գուրը, պատասխանելով եպիսկոպոսի նամակին, ասաց, որ շատ ցաւալի է, որ կայսրը վճռեց սովորյալ չիլը դառնալ այն ամենից յետոյ, որ լոյս տեսաւ վերջինիս մասին «Կապույտ գրքերի» մէջ:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ԻՌԻՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Պեկին, 12 նոյեմբերի: Բողոքի մասին առողջութեան վիճակը նորից վատաց է ներշնչում: Ասում են, որ նա անկարող է մանկալ առանց կողմնակի օգնութեան: Տեղեակ չըլաններում են թաղում են, որ վախճանը մօտ է:

ՊԱՐԻՉ, 12 նոյեմբերի: Վճռալինջ ատենանք լսում է Պիկարի ցուցմունքները:

«Matin» հաստատելով տնային նոր խուզարկութիւնների լուրը, յայտնում է, որ 43 բռնկված նամակներից 5-ը ուղղակի վերաբերում են Գրէյֆուտի գործին: Նամակները գրված են Էստերհայդի զանազան զինուորական անձինքներից և վերաբերում են 1894—1895 թվականներին: «Սրանից յետոյ այլ ևս չի կարելի կասկածել այն դերի մասին, որ խաղում էր Էստերհայդի Գրէյֆուտի գործում: «Matin» հաւատացնում է, որ պէս թէ Բուադէֆրի ցուցմունքներից երևում է, որ զինուոր շտաբի նախկին կառավարչին մանրամասն յայտնի էին այն փաստերը, որոնք Պիկարի մէջ կասկած յարուցեցին՝ Էստերհայդի դէմ, և որ հէնց այն ժամանակ ուղղակեցին Պիկարին Ալփր» առանձին յանձնարարութեամբ:

ԲԵՐԼԻՆ, 12 նոյեմբերի: Փրանս-խաղաղական առևտրական դաշնագրի առիթով «Klein. Jour» լրագիրն ասում է. «Թէ՛ն երկպետեան և երեքպետեան դաշնակցութիւնը ամուր են, այնու ամենայնիս, նրանց փոխադարձ յարաբերութիւնները մէջ տեղի ունեցաւ ուրախալի փոփոխութիւն: Մեր կայսրը և Կայսր Նիկոլայ մտքերի ամենամօտիկ փոխանակութեան և կատարեալ համաձայնութեան մէջ են՝ քաղաքական զինուոր հարցերի վերաբերմամբ: Ինչ վերաբերում է Փրանսիային, պէտք է ասել, որ մեր կայսրը ոչ մի առիթ չէ թողնում արտայայտելու իր խաղաղասիրութիւնը ասպետական սիրալիրութեամբ և բարեկամական ընդդռնութեամբ: Կայսր Փրանս-Յոլմիքի զանազան դէպքերում, մանաւանդ Արևելեան հարցում, յայտարարել է, որ կը գործի Ռուսաստանի քաղաքականութեան համեմատ, բոլորովին չը փոխելով իր սրտային յարաբերութիւնները դէպի Գերմանիան, ինչպէս երեքպետեան դաշնակցութեան անդամ: Վերջին ժամանակները Փրանսիան աւելի և աւելի է հակվում մօտենալու Գերմանիային: Մենք, ի հարկէ, չենք երազում աւելի մօտիկ կապերի մասին, բայց անպօս-սարսնականութեան դերակալութիւնը այն ձևով, ինչպէս նա արտայայտվեց սպանո-ամերիկական պատերազմի ժամանակ և մանաւանդ Պառլամենտի հարցում, ստիպեց Փրանսիային խորհել: Իտալիան նոյնպէս այժմ խաղաղասիրական քայլ է անում՝ մօտենալով Փրանսիային:

Խճագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆՔԱՐ
Հրատար.՝ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԺԱՌԱՆԳՆԵՐ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԻՐԿՈՎԱԿԱՍԵԱՆ ԵՐԿԱՐՈՒԹԻՒՆ

Մ ա ռ զ ա տ ա ռ Ն 1 զնաքը դուր է գալիս ԱՍԳՈՒԻԹՆ զէպի ԹԻՖԼԻՍ ցերեկվայ 4 ժամին և 15 րոպէին. Թ Ե Ֆ Լ Ի Ս է հասնում առաւօտեան 8 ժամ 38 րոպէին: Գուրը է գնում ԹԻՖԼԻՍԻՑ զէպի ԱՍԳՈՒՄ առաւօտեան 9 ժամ և 20 րոպէին. Բ ա թ ու մ է հասնում ցերեկվայ 8 ժամ և 52 րոպէին:

Մ ա ռ զ ա տ ա ռ Ն 3 զնաքը դուր է գալիս ԱՍԳՈՒԻԹՆ զէպի ԹԻՖԼԻՍ ցերեկվայ 10 ժամ 50 րոպէին. Թ Ե Ֆ Լ Ի Ս է հասնում ցերեկվայ 5 ժամ և 9 րոպէին: Գուրը է գնում ԹԻՖԼԻՍԻՑ զէպի ԱՍԳՈՒՄ և ցերեկվայ 6 ժամ 10 րոպէին. Բ ա թ ու մ է հասնում առաւօտեան 7 ժամին:

Մ ա ռ զ ա տ ա ռ Ն 2 զնաքը դուր է գալիս ԱՍԳՈՒԻԹՆ զէպի ԹԻՖԼԻՍ առաւօտեան 8 ժամ 30 րոպէին. Թ Ե Ֆ Լ Ի Ս է հասնում ցերեկվայ 8 ժամ 30 րոպէին: ԹԻՖԼԻՍԻՑ զէպի ԱՍԳՈՒՄ է դուր գալիս ցերեկվայ 9 ժամ 15 րոպէին. Բ ա թ ու մ է հասնում ցերեկվայ 12 ժամ 59 րոպէին:

Մ ա ռ զ ա տ ա ռ Ն 4 զնաքը դուր է գալիս ԱՍԳՈՒՄ զէպի ԹԻՖԼԻՍ ցերեկվայ 8 ժամ 40 րոպէին. Թ Ե Ֆ Լ Ի Ս է հասնում առաւօտեան 9 ժամ 55 րոպէին: ԹԻՖԼԻՍԻՑ զէպի ԱՍԳՈՒՄ է դուր գալիս առաւօտեան 11 ժամ 20 րոպէին. Բ ա թ ու մ է հասնում առաւօտեան 5 ժամ 42 րոպէին:

ЖЕНЩИНА-ВРАЧЪ

В. І. А Н Т У Ш Е В И Ч Ъ
Практикуетъ въ г. Елисаветполѣ.
Пріемъ больныхъ ежедневно отъ 10 до 12 часовъ дня. Набережная рѣчки Ган-жинки, д. Ерицохова, рядомъ съ домомъ Директора гимназіи.
(.. և. 5.) 1—10

Մամուլի տակ է և շուտով լոյս կը տեսնի

ԱԼԷՔՍԱՆԴՐ ԺԱՌԱՆԳՆԵՐ

Բանաստեղծութիւնները

Երկերի հատը

(Մօտ 225 երես, գինն է 1 ռուբ.)

Ծանկացողները պիտի դիմեն հեղինակին՝
Москва, Каретный—Садовая, меб. ком. Ивановой, № 10.
(.. և.) 2—10

ԲԺՇԿԱՊԵՏ Ե. Ի. ՖՐԱՆՑԻՈՒՍ

ժամանակակից երգերի, թիւ և ակնհայտ հիւանդու-
թիւնների:

Ընդունում է 5—7 ժամը ցերեկվային. Վերամի-
նովսկայա փողոց, տուն № 4, Գուրույի հանդէպ:
(.. և. 5.) 29—30

Հ ա ռ կ աւ ո ռ է

ՅԱՐԱՆԻ ՀԱՅՈՑ ԵՆԿԵՆՈՒ ՀԱՄԱՐ

Դ Պ Ի Ր

Ձայնագրագէտ և աշուղ ձայնով. պիտի կարողանայ նաև խոսքը պատրաստել. նախապատուութիւն կը տրվի զարգացաւորներին. պայմանաւորվել ցանկացողները դիմելու են՝
ПЕЧАТА. Благочинному священнику Тачату Марагачъ.
(.. և.) 5—6

ՀԱՅՈՒՆԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԿԱՐՈՒՁԵԻԻ ԴՊՐՈՑՈՒՄ

Նոյեմբերի 15-ից կը բացվի ԼՈՒԱՑՔԱՆՈՑ, որտեղ աշակերտուհիները կը սովորեն հարթկել (глажение): Աշակերտուհիները թիւր սահմանափակ կը լինի և առաւելութիւն կը տրվի Կարուհիի դպրոցն աւարտողներին, որոնք կընդունվեն ՁԻԻ, իսկ կողմնակի աշակերտուհիները՝ 15 ռուբլի վճարով:

Պայմանների մասին մանրամասն կարելի է տեղեկանալ Կարուհիի դպրոցում (Գանձակայա, № 25):

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՋԱՌԱՆՈՑՈՒՄ, ԹԻՖԼԻՍՈՒՄ

Ս տ ա ց վ ե լ և վ ա ճ ա ո վ ու մ է՝

	Բ.	Կ.
«БРАТСКАЯ ПОМОЩЬ ПОСТРАДАВШИМЪ ВЪ ТУРЦІИ АРМЯНАМЪ» ժողովածուի երկրորդ հո- խարդած հրատարակութիւնը, գինը 3 ռ. 25 կ. ձայնագրահամալրով	3	75
Ն ո յ ն տ ե ղ ը վ ա ճ ա ո վ ու մ են՝		
ПОЛОЖЕНИЕ АРМЯНЪ ВЪ ТУРЦІИ երկրորդ հրատ.	1	—
ПОЛОЖЕНИЕ ДѢЛЪ ВЪ ТУРЕЦКОЙ АРМЕНИИ	35	—
ՍՈՒՍԿ Երզրանի վերջին հրատարակութիւնը	1	—
ՍԱՅՏԱՐ-ՆՈՎԱ, Գէորգ Հախվերդյանի հրատարակ.	50	—

Պէտք է դիմել ուղղակի այս հասցեով՝ ТИФЛИСЪ, Центральная Книжная Торговля, իսկ արտասահմանից՝ ТИФЛИС, Librairie Central.
(.. և.) 10—10

Д А Р О М Ъ П О Р Т Р Е Т Ы

РАЗДАЮТСЯ

писанные карандашомъ-верескледомъ

Чтобы распространить въ Россіи свои прелестные портреты, писанные Карандашомъ-Верескледомъ, АРТИСТИЧЕСКОЕ ОБЩЕСТВО ПОРТРЕТОВЪ въ Парижѣ СОВЕРШЕННО БЕСПЛАТНО напишетъ всякому читателю или подписчику нашей газеты портретъ Карандашомъ-Верескледомъ большой чистоты. Для того это объявление должно быть отрезано и прислано вмѣстѣ съ Вашей фотографіею, по которой Вашъ портретъ долженъ быть написанъ, въ опредѣленный 28-дневный срокъ, считая съ настоящаго числа журнала, и ежели лицо предложитъ свою готовность рекомендовать наше Общество между своими родственниками и знакомыми. Просимъ писать четко Вашу фамилію и адресъ на синихъ фотографіи и прислать ее черезъ почту подъ слѣдующимъ адресомъ: Mon TANQUERRE, Directeur de la SOCIÉTÉ ARTISTIQUE DE PORTRAITS, 9, rue de St-Petersbourg, Paris (France) — Парижъ (Франція). — Ваша фотографія будетъ Вамъ возвращена безъ поврежденія вмѣстѣ съ большимъ портретомъ, какъ только послѣдній будетъ готовъ.

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ս Ի

ԼԵՐ

Մ Է Լ Ի Ք Ի Ա Ղ Ձ Ի Կ Ը

(Պատմական վէպ, 755 երես)

Գինը 1 ռուբ. 30 40գէկ (սովեկապ 2 ռուբլի)

Մարվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ—հեղինակի մօտ («Մշակի» խմբագրատանը) և Կենտրոնական գրա-
վաճառանոցում: ԲԱԳՈՒՄ—պ. Երբեք Գաւթեանի մօտ, Ա. Ի. Աղամովի գրասենեակ.
ՇՈՒՇՈՒՄ—Բաղրատ Տէր-Սահակեանի գրափաճառանոցում:

Հեղինակի հասցեն՝ ТИФЛИСЪ, редакция „Мшакъ“.

3—10

ՎԱՋԱՌԱՋԱՆՎԵՑ ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՋԱՌԱՆՈՑՈՒՄ

Ե Ղ Բ Ա Յ Բ Ա Կ Ա Ն Օ Գ Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

ԹԻՐԲԻԱՅՈՒՄ ՎՆԱՍՎԱԾ ՋԱՅԵՐԻՆ

ԵՐԿՐՈՐԴ, ՆՈՐԻՑ ՄԾԱՎԱԾ ԵՒ ԼՐԱՅՐԱԾ ՀՐԱՏԱՐԱՎՈՒԹԻՒՆ

ԳԻՆԸ ՋԱՆԱՊԱՐԱՋԱՍԽԱՍՈՎ, 3 Ր. 70 40գէկ

2-ое вновь обработанное и дополненное издание
ЛИТЕРАТУРНО-НАУЧНОГО СБОРНИКА

„БРАТСКАЯ ПОМОЩЬ ПОСТРАДАВШИМЪ ВЪ ТУРЦІИ АРМЯНАМЪ“.

Въ настоящее удешевленное издание, содержащее болѣе 140 статей разнообразнаго содержанія въ прозѣ и въ стихахъ, вошло болѣе 40 новыхъ, знакомящихъ съ одной стороны съ ужасающими бѣд-
ствіями турецкихъ армянъ, а съ другой—съ бытовыми и культурными условіями жизни армянъ въ
прошломъ и въ настоящемъ. Въ книгѣ приложены двѣ отдѣльныя большія группы (болѣе 100 чело-
вѣкъ) армянъ-переселенцевъ, снятыя съ натуры, а также болѣе 150 рисунковъ (40 новыхъ), въ томъ
числѣ многіе въ цвѣтныхъ краскахъ и два: „Рѣзня армянъ въ Требизондѣ 1895 г.“ И. К. Айвазов-
скаго и „Весенняя буря“ Мадесіана, въ три тона.

Цѣна 3 р., съ пересылкой 3 р. 70 к.

Складъ въ конторѣ Русскихъ Вѣдомостей и въ книжн. магаз. Карбасникова на Моховой.
НВ. Лица, не окончившія счетовъ по 1-му изданію «Братской помощи», благоволятъ поспѣ-
шить окончаніемъ таковыхъ.

Покорнѣйшая просьба къ изданіямъ, сочувствующимъ дѣлу сборника, перепечатать настоящее
объявленіе.
1—10

Завѣд. ред. Гр. Джаншіевъ